

**ԺՈՂՎՐԴԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
«ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐԾԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ»
ԺՈՂՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ¹**

Անահիտ Աթայան

*Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
ԱրՊՀ*

Բանալի բառեր. մանրապատում, բանահյուսություն, հնագույն սովորություններ, հանելուկներ, առած-ասացվածքներ, խաղիկներ, իմաստուն խոսքեր, անեծքներ, օրհնանքներ, ժողովուրդ, մանկական բառաշարքեր, շուտասելուկներ, ֆուլկլորագետ, հետազոտություն:

«Ժողովրդական հին բանահյուսությունը ոսկեթև հավքերի մի արագաթիչ երամի է նման, որ գալիս է մարդկային կյանքի խորին խորքերից և անողորմ ժամանակ քանու բերանին գնում է անդարծ: Դաժան ու կենսաքաղ որսկաններից հալածական քանի կախարդական ոսկեփետուր է կորցրել նա, քանի անգամ թևակոտոր դարձել իր հողմածեծ ճանապարհի արյունոտ թնջուկներում:

Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փետուրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ և թանկագին, մեր ազգ ու տակի հիշատակի պես սիրելի», - կարդում ենք Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքում²:

Իսկ «Գրառումներ ծոցատետրից» գրքույկում նշանավոր բանահավաքը գրում է. «Ի ծննդե ապրելով գյուղաշխարհում, նրա բարձր սարերում, խեղդված սրբատաշ քարերի մեջ, լսելով դարերից եկած հոգեպարար մեղեդիները, իմաստուն խոսքն ու զրույցը, խորանալով հնագույն սովորությունների մեջ, ես ականայից դարձա դրանց գերին: Գրի էի առնում դեռևս այն ժամանակից, երբ նոր գրիչ բռնել էի սովորում, համոզված լինելով, որ ես իմ ժողովրդի մոռացված կենսագրությունն եմ գրում:

Ես իմ երգերը կրակով եմ գրում,

Որ օրը թրթռա,

Որ մոմը քնքշանա ու վառվի:³

¹ Հողվածք ընդունված է 10.10.14:

² Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 3:

³ Հարությունյան Լ., Գրառումներ ծոցատետրից, Ստեփանակերտ, 2004, էջ 65:

Լ. Հարությունյանը, հիրավի, թունանյանական «Հուր եմ դառել, լույս տվել» կարգախոսով է ապրել ու սերունդներին հանձնել Արցախի բանահյուսության գոհարակերտ նմուշները՝ հեքիաթները, գրույցները, ավանդությունները, երգերը, խրատները, օրինանքները, առած-ասացվածքները, ազգագրական բազմաթիվ բանաձևումներ...

Քաջ գիտակցելով, որ հայ բանագիտությունը մեր մշակույթի պատմության ուսումնասիրության մի ճյուղն է, նշանավոր բանասերը ուսումնասիրեց արցախյան ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը, հասարակական մտքի զարգացման հետ կապված բազում երևույթներ, հին ծագում ունեցող բազմաթիվ ժանրեր և իր՝ բանագետի հմուտ դիտարկումներով վեր հանեց դրանց ժանրային ու գաղափարական խորքն ու կառուցվածքային առանձնահատկությունները:

Ժողովրդական բանահյուսության նյութեր պարունակող մնայուն հուշարձաններ են Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» 5 հատորները: Լ. Հարությունյանը ոչ միայն բանահյուսական նյութեր հավաքող, այլ նաև ուսումնասիրող էր: Հայ բանարվեստի զարգացման տարբեր փուլերում նշանավոր բանագետների կողմից նշվել է ազգային երգերի, ավանդությունների մեծ արժեքը, խոսվել դրանց հավաքման և ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Արցախյան բանահյուսությունը, լինելով հայ ժողովրդական բանահյուսության անբաժանելի մասը, ժամանակի մոռացության փոշուց փրկվեց նաև Լ. Հարությունյանի ջանքերի շնորհիվ, մի մարդ, որը, հալմար առիթ և ժամանակ գտնելով, գրի է առել բանահյուսական պատահած կամ լսած նյութը՝ առաջնորդվելով իր նախասիրություններով, երբեմն՝ մշակելով ու ոճավորելով նաև իր լսածն ու հավաքածը: Լ. Հարությունյանի կատարածը տարերային բնույթ չի կրում, այլ գիտականորեն հիմնավորված է՝ կապված Արցախի ժողովրդի մշակույթի, նրա բանավոր ստեղծագործության ծագման, զարգացման, պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրած փոփոխությունների հետ: Արցախի կյանքի մեծ հեղաբեկումները, անընդհատ կրկնվող ասպատակությունները վտանգում էին բանահյուսական նյութերի ապրելու ձգտումը: Եվ, ահա, Լ. Հարությունյանի «Նշխարները» դառնում են հայ բանահյուսության արխիվի ամենանշանակալից հուշարձաններից մեկը: Նշանավոր բանահավաքի՝ թերթերում ու ամսագրերում տպագրված հոդվածները հավաստում են հեղինակի գիտական ուսումնասիրությունները բանահյուսական ժանրե-

րի գեղարվեստական առանձնահատկությունների, նրանց պատմափիլիսոփայության, գաղափարական բովանդակության, կառուցվածքային, լեզվաոճական առանձնահատկությունների խոր իմացության բնագավառում:

Լ. Հարությունյանի 5 ժողովածուներն ապացուցում են, որ բանահյուսությունն իր մեջ խտացրել է ոչ միայն ժողովրդի կենսափորձն ու իմաստությունը, այլև նրա հավատալիքները, նրա սովորույթները, վարքն ու բարքը: Մի շարք հարցերի քննությամբ Լ. Հարությունյանն ապացուցում է, որ բանահյուսությունը նաև ազգագրական հարուստ շտեմարան է, որի կողքով անտարբեր անցնել հնարավոր չէ: Բանահյուսության բազմաթիվ հարցեր կարող են ճշմարտացի մեկնաբանվել, եթե հաշվի են առնվում ազգագրական տվյալները: Բանահյուսությունն ու ազգագրությունը միասին արտացոլում են ժողովրդի պատմական զարգացման ուղին:

Ժողովրդի պատմական զարգացման ուղին, նրա սովորույթները, վարքն ու բարքը արտացոլող երկեր են ոչ միայն բանահյուսական մեծակտավ երկերը (որոնց մասին մի շարք անգամ խոսվել է), այլ նաև մանրապատում ստեղծագործությունները, որոնք ևս յուրօրինակ մարգարիտներ են, հինավուրց ժանրեր, կարճ, հիշողության մեջ պահվող քառատողեր, երկտողեր, միատողանի հյուսվածքներ, որոնք, հորինվելով տարբեր պարագաներում, դարձել են մարդկանց աշխարհայացքի դրսևորման միջոցներ:

Հակիրճ բանաձևումների մեջ ամփոփված առած-ասացվածքները, թևավոր խոսքերը, խրախճանականները, շուտասելուկներն ու սուտասելուկները, խաղիկները տարբեր են ժանրային առանձնահատկություններով ու արտահայտության ձևերով: Սակայն դրանք բոլորն էլ արցախցու խառնվածքի, կենցաղի, նիստուկացի, մարդկային բարոյական արժեքների վկայություններ են՝ ստեղծված պատմական տարբեր ժամանակներում: Լ. Հարությունյանը դրանք ժամանակագրական կարգով չի դասդասել, քանի որ գիտակցել է, որ խորն են դրանց արմատները և պատմական ցանկացած ժամանակահատվածում էլ դրանք բնութագրում են արցախցուն, նրա կենցաղը, սովորույթներն ու համոզմունքները, վերաբերմունքը շրջապատի հանդեպ:

Ուսումնասիրելով 5 ժողովածուների մանրապատում ստեղծագործությունները՝ նկատում ենք, որ նշանավոր բանահավաքը երբեմն ստեղծագործություններից ջնջել է լեզվաոճական թերություններն ու անկատար

մտքերը: Մենք հնարավորություն ենք ունեցել համատեղելու միևնույն հորինվածքի տարբեր պատումները: Մի բան պարզ է, որ բանահյուսությունը միշտ էլ աստիճանաբար հղկվում է, հարթվում, կատարելագործվում: Շատ դեպքերում Լ. Հարությունյանը անկատար է թողել տարբերակը՝ իր բնական հնչողությամբ՝ ընդգծելով տարբեր բանահավաքների յուրահատուկ ծիրքը: Այնուամենայնիվ, գրի առնված յուրաքանչյուր մանրապատում ստեղծագործություն խոսում է ժողովրդի հանձարեղության մասին: Իսկ Լ. Հարությունյան բանագետը, օժտված լինելով ստեղծագործելու բնատուր տաղանդով, պայծառ հիշողությամբ, բազում տարբերակներով վեր է հանել, կորստից փրկել հետաքրքիր գործեր, որոնք բացահայտում են ժողովրդի կենսահայեցողությունը, ապրելու, արարելու տենչը:

Ժողովրդական մանրապատում բանաձևումներում Լ. Հարությունյանը դիմում է պատմությանը՝ դառնալով յուրովի բանահավաք-պատմաբան: «Ֆոլկլորը սերտորեն կապված է պատմության հետ և հանդիսանում է նրա անբաժան ու յուրահատուկ ուղեցույցը: Չի կարելի լավ իմանալ առաջինը, առանց լավ իմանալու վերջինը: Ահա թե ինչու իր հետազոտությունների ընթացքում ֆոլկլորագետը պետք է լայնորեն օգտագործի պատմության տվյալները, միաժամանակ լինի նաև պատմաբան», - կարդում ենք Գր. Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում:¹

Լ. Հարությունյանի առած-ասացվածքները, հանելուկները, դարձվածքները, առավել ևս՝ խաղիկները կապված են ժողովրդի պատմության, նրա պատմական ճակատագրի հետ:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից առած-ասացվածքները լայն ընդգրկում ունեն, բովանդակությամբ բազմազան են: Դրանցում դրսևորվել է մեծ բարոյախոսություն, որը հիմնվել է լավագույն կյանքի նկատմամբ մարդու հավատի և մարդու կատարելության գաղափարի վրա: Առածներն ու ասացվածքները բարձր են գնահատվել ժողովրդի կողմից, որովհետև մեծ է դրանց դաստիարակչական արժեքը:

Իրենց թեմաներով, գաղափարական խոր բովանդակությամբ, փիլիսոփայական խորքով սրանք արտացոլում են կյանքը, մարդկային հարաբերությունները: Դրանց մեջ ժողովուրդն է՝ իր ըմբռնումներով, հավատով, հույսով:

¹ Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1967, էջ 19:

Առած-ասացվածքները լի են գեղեցիկ խորհրդանիշներով և փիլիսոփայական խորհրդածություններով: Չկա մի բնագավառ, որ դուրս մնացած լինի բանասացների, առածասացների տեսադաշտից: Դիտելով վատն ու չարը՝ նրանք պահպանել են լավը, բարին, վեհն ու գեղեցիկը:

Առածներն ու ասացվածքները խորապես ազգային են: Նրանք աչքի են ընկնում ձևի և բովանդակության միասնությամբ, խորիմաստ են, մի քանի բառով մեծ մտքեր են արտահայտում: Հեզնանքը, երգիծանքը, սիմվոլիկան, պատկերավորությունը, հանգավորումը, ռիթմիկան. սրանք առանձնահատկություններ են, որ հատուկ են ժողովրդական բանահյուսության քնարական ժանրերին:

Առած-ասացվածքները գրեթե մոտ են ժանրային առանձնահատկություններով, բայց տարբեր են արտահայտության ձևով, ասել է թե՛ ասացվածքը առանց փոխաբերական իմաստի ուղղակի ասված խոսք է, առածն ունի փոխաբերական իմաստ:

Լ. Հարությունյանի «Նշխարների» III հատորում առանձին վերնագրի տակ հավաքված են առածներ, ասացվածքներ, իմաստություններ (բանաձևային բանահյուսություն): Ասացվածքներ կան գրեթե բոլոր ժողովածուներում: Դրանց մի մասը մի տեսակ էնոցիոնալ բանաձևումներ են՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

1-5-րդ գրքերում բազմաթիվ են աշխատանքն ու արհեստը փառաբանող, ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող, փիլիսոփայական խորհրդածություններ, խրատ ու խորհուրդ արտահայտող առած-ասացվածքները:

Օր. Ամեռնը ըրա, ծմեռնը կեր:

Աշխադանքնան ըրխոթունը քուր ախպեր են:

Աշխադանքը ծիա, վեր երըս ընում, եր-երա խաղում:

Աշխադած հացն ա հալալ:

Կարճ բանաձևերում հաճախ են ծաղրվում ծուլությունը, անբան մարդը.

Անե Հուրին

Ծաղկե փուրին:

Ծերքը անպեն, լուզուն պենե:

Անպենը պընըվուրեն կործի տրավ:

Փիլիսոփայական խորհրդածություններ, խրատներ ու խորհուրդներ արտահայտող առած-ասացվածքների իմաստը բարի խրատն է, մարդուն փառաբանելը, լավ խորհուրդը.

Լավա անիս ուչ, հինչ փիս անիս:

Անումը բեղնամ չըն անել

Անպտուղ ծառեն քարավ չըն տամ

Անհամ խոսքը անհամ ռխան տուս կկյա:

Արցախցին միշտ էլ ապավինել է Աստծուն, նրա հետ կապել իր հույսն ու հավատը:

Աստված բիղիս, վեր կարիս Աստծու սերտը գիղյաս:

Աստուծ լավեն նհետա առուտուր անում:

Աստծու անա մեծը էլիա աստուծա:

Այ իմ մեխը մամառ Աստուծ, փառք քեզ:

Առած-ասացվածքները ներքին չափ ունեն, ռիթմիկա, ներքին հանգավորում:

Լ. Հարությունյանը ի մի է բերել բանասացներից լսած իմաստուն խոսքերը, որոնք մի-մի փիլիսոփայություն են, պատգամ, ժողովրդի փորձով հարստացած ասույթներ.

Թա հինչ անիս, հինչ չանիս, հոգուդ մեխկ չանիս:

Պարզ ու մաքուր ապրելու ձգտումն է արցախցու կենսաձևը.

Ճյուրը վեր պրտողից՝ յա կտրող կա, յա յեխտուտ ծերք կա մաչին:

Խուխեն ծծին նհետ խրատե:

Արցախցին ինքնագոհության գնալ գիտե.

Ինծ նեղ կանիմ, քեզ տեղ կանիմ:

Հնգրությունը հայոթունա,

Հայոթունը՝ ըխարոթունա:

«Բառարան» բաժնում (հ. 5) Լ. Հարությունյանը փորձում է մեկնաբանել «վաղնջական ժամանակներից մեր օրերին հասած ժողովրդական բանահյուսության մասունքները...»:

«Շատ հարցերի պատասխաններ ամբողջացման կարիք ունեն: Կան վրիպումներ ու սխալներ, որոնց համար թող ինձ ների ընթերցողը»,- իրավացիորեն գրում է հեղինակը:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից են անեծքները, օրհնանքները, մաղթանքները, սպառնալիքները, երդումներն ու ցանկությունները: Սրանք՝ երբեմն խրատական, բարին կամենալու ցանկությամբ, երբեմն չարը խափանելու ընդունակ, մեկ-մեկ էլ կծու, սառը խոսքեր են, երբեմն էլ՝ զավեշտական արտահայտություններ: Միշտ էլ

դրանք ուղղված են մարդկային արատների դեմ և կիրառվում են մարդու լավը ցանկանալու, նրան բարի տեսնելու, օգնելու նպատակներով:

Հետաքրքիր են ինքնախարագանման, ինքնաքննադատության համար ստեղծված անեծքներն ու սպառնալիքները.

Օր. Թե սուտ ասիմ, տափը թումբ անիմ:

Թե սուտ ասիմ, ծեր մեխքեն տրանամ

Լուզուս չուրանա:

Հարությունյանը այբբենական կարգով դասդասում է անեծքներն ու սպառնալիքները, որոնք տարբեր իմաստներ ու նպատակներ ունեն:

Ի հատորի «բանաձևային բանահյուսություն» վերնագրի տակ զետեղված են ասացվածքներ, պատկերավոր արտահայտություններ, դարձվածքներ, օրհնանքներ, բարեմաղթություններ, կենացներ, սպառնալիքներ, ծիսական արտահայտություններ, անեծքներ, ժողովրդական խաղեր: «Պատասխանիր արագ» վերնագրի տակ Լ. Հարությունյանը ի մի է բերել ժողովրդի մեջ տարածված խաղային իմաստ ունեցող որոշակի արտահայտություններ, որոնք տրամաբանության զարգացման օրինակներ են: Ժողովուրդը նաև մտածել է դիմացինին «Խելքով գինելու մասին» ու ստեղծել է.

Մի կիլո պեմբակն ա ծանդր, թա մին կիլո արկաթը:

Էս մարթին կնգանը ախպերը իմ դայի յա, էս մարթը իմ հինչըսա:

Ծուկունկեսը կպիկկեսա, օխտը ծուկունը քանե՞ կապեկ կընի¹ և այլն:

Երեխաների տրամաբանության զարգացման համար ժողովուրդը ստեղծել է նաև շուտասելուկներ ու սուրասելուկներ: Սրանք նաև խոսքի զարգացման միջոցներ են եղել, օգնել են լեզվական արատ ունեցող մարդկանց խոսքի կարգավորմանը:

Օր. Տնձը ծառեն էրկու ծանդր-ծունդր տանձ,

Ծտը ծառեն էրկու մանդր-մանդր տանձ:

Բախտդ սիրիմ Բաղդասար,

Բախտդ մնաց Բախտասար:

Որպես խոսքի զարգացման միջոցներ՝ շուտասելուկները տարածված են եղել մեր դասագրքերում: Լ. Հարությունյանը «դասական հանձարեղ» երկ է համարում «Ակուփ ապեր» շուտասելուկը.

Ակուփ ապեր

Տու ինձեստ

¹Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 383:

Մին խուփ կապե,
 Մին կեփ կապե,
 Անունդ տնիմ
 Խուփը կապե,
 Կփըկապե
 Տփըկապե
 Ակուփ ապեր:¹

Արհեստավորի հմայիչ կերպարն է այստեղ, փորձություն է նրա համար, որպեսզի վաստակի նշված անունները: Իսկ դրանք հարզի են հայ աշխատավորի, արհեստավորի համար, կեցության հիմք են: Ղարաբաղյան կենցաղի գործիչները՝ խուփ, կեփ, տեփ, վկայում են ժողովրդի կապվածությունը աշխատանքին, կենցաղին:

Նույն հատորում Լ. Հարությունյանը բերում է ժողովրդի կողմից ասված հետևյալ խոսքերը, որոնք բարոյական դասեր են գալիք սերունդներին:

- Ա ժողովուրդ, լավ մարթին կենացը, լավ մարթան խունգավետ ա կյամ, աշխարքս էլ նրան կենթանն ա: Փիսը վեր ընի վուչ, լավին դադրը գիդալ չընք, համ էլ՝ սայաղ չընք կենալ: Մին պեն ըմ օգում, փիսին աստուծ էնքան շնորիք տա, վեր կարե լավեն տեղը գիդա: Ամենակարող աստված աճողություն տա ծառ տնգողեն, տոն շինողեն, հղե քցողեն, ախայուր շնողեն, հանգիստարան վենն ընողեն, կյիր կյրողեն, պատկեր քշողեն, պարի պեն փռնողեն, մարթին սերտը գիդողեն... Եկեք մինչև մեռնելը՝ վեչ մեռնինք:² Սա ղարաբաղցու մաղթանքն ու խրատն է ժողովրդին: Սրանք խրախճանքի ժամանակ ասված խոսքեր են, պատգամ ու խրատ, շատերին ուղղված խոսք՝ լավ մարդու, նրա լավ գործերի մասին:

Լ. Հարությունյանը գրի է առել նաև մանկական բառաշարքեր (1-1.5 տարեկան)՝ հո՞լա-ուր է, ծածառ-կանգնել, կակա-կոնֆետ և այլն:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություն է նաև հանգախաղը: Ըստ բանահավաքի՝ հանգախաղի մասնակիցները իրար առաջարկում էին բառեր, բառակապակցություններ և նախադասություններ, և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ: Երբեմն պատասխանները դառնում էին կարճ բանաստեղծություններ:

¹ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 105:

² Նույն տեղում, էջ 181:

Խաղի նպատակը առաջարկվածին գեղեցիկ ու սահուն հանգեր հորինելն է՝ որքան հնարավոր է արագ ու զավեշտական:

Հանգախաղերը ծավալվում էին 2 հարևան գյուղերի պատանիների և աղջիկների միջև, որոնք այդ նպատակով հավաքվում էին սահմանագլխին: Հանգախաղերին մասնակցում էին նաև տարեցները:

Լ. Հարությունյանը հավաստում է, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեսրոպի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին նաև խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն:

Տոնախմբությունների ժամանակ հանգախաղեր էին կատարվում տղաների և աղջիկների միջև:

Սրանք երբեմն սիրային բնույթ էին ստանում.

Օր. - Սիրել

- Քեզ սիրիմ քշեր-ցիրել:

- Մնեշակ

- Ըխճըկան փեշակ:

- Սամեթ

- Նեստա կենամ ծամետ:

Ձավեշտական բովանդակություն ունեին հանգախաղերից շատերը.

Օր. Վեց

- Խզըտակեդ կյամ՝ տրխընետ կեց:

- Հաչիմ, հաչիմ,

- Թևադ քաչիմ,

- Թոշադ պաչիմ և այլն:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործություններից են խրախճանականները: Այդ մասին է խոսում Լ. Հարությունյանը «Նշխարների» 4-րդ գրքում¹: Բանագետի հմտությամբ է հեղինակը մեկնաբանում խրախճանքն ու խրախճանականները: Ըստ Լ. Հարությունյանի՝ խրախճանք կոչվեցին Արև-Աստծուն ուղղված տոնախմբություններն ու կերուխումի արարողությունները: Ուրեմն դրանք դեռևս հեթանոսության ժամանակաշրջանում հանդես եկած երևույթներ են: «Կերուխումին առընթեր ուրախընթաց միջոցները կոչվեցին խրախճանականներ: Սրանք էլ օգնում էին

¹Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 104:

մարդկանց երևակայության զարգացմանը, ճկուն մտածողության ձևավորմանը»։ Լ. Հարությունյանը բացահայտում է, որ «արևապաշտական Հայաստանի բազմադար շրջաններում և նրանից հետո էլ հայի միտքն ու ստեղծագործ ոգին ավելի էին թևածում, քան խստավարժվում էր մարմինը։ Ձգտումը դեպի արվեստն ու իմացությունը ջլատել էր ընչաքաղցության՝ առնելու, գրավելու, իրենը դարձնելու մոլուցքը։ Անաշխատ բերկրանքը հեռու էր հայ անհատականությունից՝ ի սկզբանե», - գրում է բանահավաքը։¹

Հիրավի, արվեստասեր ժողովուրդը դեմ է չարին, սիրում է բարին ու բարությանը է պայքարում չար ուժերի դեմ։ Արևին պետք է սատար լինել՝ չար ուժերի դեմ մղվող պայքարում։ Եվ բռնության դաժան ու բիրտ ուժերը չքանում էին խրախճանքներից ու զվարճանքներից։

Խրախճանքներն ու խրախճանականները դարերի ընթացքում փոխվում են՝ կապվելով սովորույթների, ծիսակատարությունների հետ։ Տարածված էին ծիսախաղը, կոխը, լարախաղացությունը, երգը, տաղը, հանգախաղը, գլուխկոտրուկը, հաշվեխաղերը, նմանակումները։ Ծիծաղաշարժ ասույթները հեշտացնում էին ապրելը, բնության չար ուժերի դեմ պայքարելը։

Բանահյուսական հնագույն ժանրերից է հանելուկը։ Սա մտավոր ժամանց էր գրեթե բոլորի համար։ Այն ևս մտածողության զարգացման գործոն է։ Առարկայի ծանոթ հատկանիշների թվարկումներով որոշվում է տվյալ առարկան։ Հանելուկներով շատ հաճախ մրցում էր ժողովուրդը. տարեց մարդիկ՝ տարեցների, տղաները՝ տղաների հետ, փոքրերը ևս փորձում էին անգիր անել։ Հանելուկ բառի մասին Լ. Հարությունյանը գրում է. «Արցախի բարբառում այն ավանդվել է հնելիք տեսքով, որն իմ հանդգմամբ առավել ստույգ է մատուցում նախնական իմաստը և ձևը՝ հանելիք, որ հեշտությամբ կարելի է փոխարինել մեկնաբանելիք, քննելիք, բացահայտելիք, հայտնաբանելիք և այլ հոմանիշներով։ Հանելիք բառը իրեր և երևույթներ քննելու, նրանց գաղտնիքների մեջ խորանալու միտում ունի»։² Այնուհետև բանագետը համոզիչ բացատրում է հանելուկի պնզը բարբառային անունը։

«Պնզը բառը բարբառում ունի որոշ առումով բացասական իմաստ (ոչ լուրջ բան, պատում)։ Այդ իմաստից ապահովված չեն նաև պնզաբանել,

¹ Նույն տեղում, էջ 104։

² Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 107։

պնզլաբանող և այլ բառեր»։ Լ. Հարությունյանը գտնում է, որ «նման իմաստ պնզը բառն ստացել է ժողովրդական զվարճահարույց բանքի նկատմամբ քրիստոնեական գաղափարախոսության ունեցած վերաբերմունքով։ Ըստ քրիստոնեական մոտեցման՝ պնզլաբանելը հեթանոսությունից ժառանգված պիղծ սովորություն է»։ Սա, թերևս, վիճելի է, պարզապես միշտ չէ, որ հանելուկը լուրջ իմաստ է ունեցել կամ կարևոր առարկա է մատնանշել, հետևաբար, հնարավոր է, որ հենց այդ պատճառով է ժողովուրդը անվանել պնզը, քանի որ տավակ ասույթներ չի սիրել, դրանք պետք է իմաստություն, իրենց մեջ «խելքի նշույլ» ունենային։

Բանահավաքը հիանալի մեկնաբանությամբ բացահայտում է «Քաթ, քաթ» բանահյուսական չափածո շարքը, որ բանասերներից շատերը դիտել են որպես հեքիաթների սկիզբ, նախաբան։

Ըստ Լ. Հարությունյանի մեկնաբանման՝ դա հանելուկների շարք է։ Մեզ հասած կտորները բանահավաքը վերլուծում-մեկնաբանում է իբրև հանելուկներ։ Համոզիչ են վերլուծվող կտորները.

Քաթ, քաթ, մի ջվալ ցակատ՝
Վեչ կոթ օնե, վեչ՝ արկաթ...

Ջվալը մարդու բերանն է, անկոթ ու աներկաթ կտրիչները՝ ատամները։ Եվ այսպես շարունակ։ Ժողովուրդը հավանաբար քաթ է անվանում յուրաքանչյուր պատմվող, ասվող խոսք, որը պետք է հասցեատեր ունենա, լուծվի, բացահայտվի։ Պատումի մեջ նկարագրվում է արցախյան օջախը, նիստուկացը, երեխաների հավաքվելն ու յուղապատառ ուտելը։ «Պտկան կծողը տարեց երեխան է, իսկ տակը լպստողը տան փոքրիկը։ Հանելուկաշարը ավանդական գեղեցիկ ու համեստ սովորույթների մասին է։ Լ. Հարությունյանի հավաքածուներում կան հանելուկներ արցախցու կենցաղին, նիստուկացին, մարդկային հարաբերություններին վերաբերող.

Այսպես. Ցիրեկը խանում-խաթուն
Քշերը՝ ճռը կաթուն։ (Մահճակալ)
կամ
Հար տամ, պատ տամ,
Քաքուլադ ծիք տամ։ (Կշեռք)¹

¹ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 116։

Հանելուկները վերցված են Արցախի բուսական, կենդանական աշխարհներից, առօրյա գործածական առարկաներից, մարդկային հարաբերություններից: Դրանք էլ առած-ասացվածքների նման ընդգրկում են կյանքի տարբեր բնագավառներ-աշխատանք, ընտանիք, մարդկային փոխհարաբերություններ, թռչուններ, բույսեր, մարդու մարմնի մասեր, մրգեր, բանջարեղենի տեսակներ, երևույթներ, որոնք վերաբերում են մարդու աշխարհաճանաչողությանը: Խրատական բովանդակությամբ հանելուկները նպատակ ունեն շտկելու սխալը, թերությունը: Դրանք տարածված են եղել նաև արցախյան խաղիկների մեջ: Բազմաթիվ առիթներով Լ. Հարությունյանը բացահայտում է ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների յուրահատկությունները, ընդգծում տվյալ բանասացի հասարակական-կենցաղային միջավայրի ազդեցությունը նրա հավաքած ստեղծագործության բնույթի վրա:

Արցախյան խաղիկները ևս իմաստուն քառատողեր են՝ «գերազանցապես՝ գյուղական բանաստեղծություններ և սիրո երգեր»: Սրանք հիմնականում ստեղծված են գեղջուկ պատանիների և երիտասարդների կողմից: Գրառումներում առկա են նաև տարեց մարդկանց (կանանց կամ ծերունիների) իմաստությամբ շաղախված տողեր: Խաղիկները համեմված են ժողովրդական սովորույթներով, հարուստ են մարդկայնության, ազնվության ակորդներով: Սրանք հանգավորված են պարզ, ժողովրդախոսակցական լեզվին հատուկ հանգավորումով:

Սիրային խաղերը ժողովրդի բանաստեղծական հանձարի վկայություններն են:

Սերս կրակ, սեր կասիմ,
Տեղդ ծոխ ա, եր կասիմ,
Հենց վեր տեսե քեփ չոնիս
Մեղրան անուշ երգ կասիմ:¹

Սիրառատ խաղիկներում նաև խռովկան-նեղացած սրտի պոռթկումներ են, կես կատակ, կես լուրջ խոսքեր, ոչ իր կամքով ասված անեծքախառն տողեր: Բովանդակային բազմազանությամբ Արցախի բանահյուսական գոհարները քաղցր ու առինքնող են, լուսավոր ու հուսատու:

Սարերը լոխ ծխավուր ա,
Մին ծխավուր զռավուրա,

¹ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 24:

Խաղ ասում սարեն տոշին,
Խաղը քաղցր, հյավուրա:¹

Տարբերվում է հայոց երգն ու տաղը, տարբեր են նաև արցախցի ծիավորները (ծիավուր անվանում էին քաջ, համարձակ, երևելի այրերին): Զիավորների մեջ մեկը զռավուր ա (նախշուն), նրա երգն ու խաղն էլ քաղցր է ու հայավարի: Հետաքրքիր են Արցախի գյուղերին, գյուղական սովորույթներին վերաբերող խաղիկները:

Օր. Նշան ա, հա՛յ, նշանա,
Մշկապատը քշանա,
Ախճիզ օզինք Ննգվա
Կինին պիրինք Ըշանա:²

Գյուղերն իրար հետ համերաշխ են, մարդիկ մեկը մյուսի հանդեպ սիրով լի, քանի որ նրանց սատար է սուրբը.

Մրասա հղեն տեսա,
Պերածղ կյառան մեսա,
Մարասը միշտ հակեղ ընի,
Այ իմ նանու ազիզ փեսա:

Արցախցին միշտ էլ թուրքից ահ է ունեցել: Բայց նրա մարդասիրությունը ծայրահեղ մեծ է, այն աստիճան, որ թուրքի հետ փորձել է համերաշխ լինել, սակայն չի ստացվել.

Հի՞նչ կընի՝ ափ զափու քյինի,
Թորքեն փիսը տափու քյնի,
Թորքեն գառին ծափ տա,
Հային տղան պար կյա:³

Մի այլ տաղում ժողովուրդը երգում է.

Հայը թիֆլիս, Երևան ա,
Բաքուն լուս ա հային հետե՛
Մանթաշովեն ըրեսան ա,
Վախ ու ավա՛ղ էն ազգեն,
Վեր թուրքեն հրևան ա:⁴

¹ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 25:

² Նույն տեղում, էջ 24:

³ Նույն տեղում, էջ 28:

⁴ Նույն տեղում, էջ 25:

Հայի տարագիր, պանդուխտ վիճակը բնորոշում են մի շարք խաղիկներ

Նանի, նանի, նան չունիմ,
Մե գդալ թթու թան չունիմ,
Սև արին հայաց Նուխին,
Անտեր եմ, վաթան չունիմ:

Կամ Ես բաղչա ու բեր չունիմ
Շատ դարդ օնիմ, դեղ չունիմ,
Բնավեր հավքի նման
Մեկ նստելու տեղ չունիմ:¹

Ընտանեսիրության, արցախյան բարոյականության, հավատարմության բազում օրինակներ կան ժողովրդական երգերում: Խաղիկներում առկա է մեծերի օրինանքը ջահելներին:

«Մուղանա հորովել» չափածո տաղում ժողովրդի վիշտն ու ցավն է, որովհետև թուրքը միշտ է վիշտ ու ցավ, չարիք է եղել հայի համար:

Թարթառ, աշկդ պաց արա,
Տափդ վարե, հաց արա,
Մին ծերքավ էլ դամադ սրե
Ալուն ծուցը լաց արա:
Արա հո, վարա հո...

Ցրիլ մի ցավք ու ալիք
Տառնալ մի դու խաղալիք,
Ծերք մեկնե Արաքս, Քուռին,
Հալածիր թուրք ու չարիք,
Արա հո, վարա հո...²

Բանահյուսության նյութերի հետազոտության ընթացքում Լ. Հարությունյանը շատ անգամ է այս կամ այն բառի իմաստի մեկնությամբ բացահայտում հյուսվածքի գաղափարական ու գեղարվեստական արժեքները՝ համոզված, որ ֆոլկլորագետի համար մեծ զենք է ստուգաբանությունը, որն օգնում է բացահայտելու շատ ու շատ առեղծվածներ:

Լ. Հարությունյանի բանահավաքչական աշխատանքները, այդ թվում ժողովրդական մանրապատում երկերը, դրանց վերլուծությունները, եզ-

¹ Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 3, Ստեփանակերտ 2007, էջ 25:

² Նույն տեղում, էջ 25:

րահանգումները մեծ նշանակություն ունեն Արցախի ժողովրդական բանահյուսության գնահատման ու արժևորման համար:

Դրանք վերաբերում են տարբեր ժամանակների՝ սկսած հեթանոսությունից մինչև մեր օրերը, և վկայում են ժողովրդի անխարդախ հոգու, բարձր բարոյականության, հպարտ կենցաղավարության, բնատուր շնորհքի, մտավոր ըմբռնումների մասին:

Լ. Հարությունյանի 5 ժողովածուները, մամուլում ցրված բազմաթիվ նյութերը վկայում են Ղարաբաղի ժողովրդի հազարամյակների ու հարյուրամյակների կենսագործունեությունը՝ միահյուսված հույսի, լույսի, վեհի ու գեղեցիկի որոնումներին:

Ամփոփում

«ժողովրդական մանրապատումները Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուներում» հոդվածում քննարկվում են հեղինակի 5 ժողովածուների նյութերը՝ մեկնաբանելով բանաձևային բանահյուսության նմուշները՝ կապված արցախցու կյանքի, պատմության, կենցաղի, սովորույթների հետ: Լ. Հարությունյանի գործը նպատակային բնույթ է կրում, գիտականորեն հիմնավորված է՝ կապված Արցախի ժողովրդի մշակույթի, նրա բանավոր ստեղծագործության ծագման, զարգացման, պատմական տարբեր ժամանակաշրջանում կրած փոփոխությունների հետ:

Լ. Հարությունյանի 5 ժողովածուների մանրապատումները վկայում են ժողովրդի բարձր բարոյականության, հպարտ կենցաղավարության, բնատուր շնորհքի, մտավոր ըմբռնումների մասին:

Народные эскизы в сборниках Левона Арутюняна “Реликвии фольклора Арцаха”

Анаит Атаян

Резюме

Ключевые слова: эскиз, фольклор, древние традиции, загадки, пословицы – поговорки, игры, изречения, проклятие, благословение, народ, детские словесные ряды, скороговорки, фольклорист, исследование.

В статье “Народные эскизы в сборниках Левона Арутюняна “Реликвии фольклора Арцаха”” обсуждаются материалы пяти сборников, комментируя примеры эскизов, касающихся жизни, истории, быта, традиций арцахца.

Деятельность Л.Арутюняна носит целенаправленный характер, научно обусловлен, связан с культурой народа Арцаха, зарождением, развитием его устного творчества, несущем изменения в различные исторические периоды.

Эскизы в пяти сборниках Левона Арутюняна свидетельствуют о высокой морали, гордом быте, природном даре, умственном восприятии народа.

**"Folk sketches in the collections of Levon Hayrapetyan",
"Relics of Artsakh folklore"**

Anahit Atayan

Summary

Key words: sketch, folklore, ancient traditions, mystery, proverbs, sayings, games, curses, blessings, people, children's verbal series, tongue twisters, folklorist, investigation.

In the articles "Folk sketches in the collections of Levon Hayrapetyan", "Relics of Artsakh folklore" the materials of 5 collections of the author are discussed, interpreting samples of sketches related to life, history, mode of life, Artsakh traditions.

The activity of Levon Hayrapetyan has a purposeful character, scientifically proved, connected with the culture of Artsakh people, generation, with the development of the spoken creativity that brings changes to different historical periods.

Sketches in the 5 collections of Levon Hayrapetyan witness about the high moral, proud mode of life, natural gift and mental perception of the people.